

**ԱՂՔԱՏՆ ՈՒ ԶՈՒԿ ԲՈՆՈՂԱԾ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք
(Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)**

Մի մարդ շատ աղքատ ա ըլել:

Մի օր սա վեր ա կենըմ գնըմ աշխատանք գտնի, մեկ էլ մի մարդ ա պատահըմ, ասըմ ա.— Էդ ո ն իր ես գնըմ:

Ասըմ ա.— Աղքատ մարդ եմ, գնըմ եմ մի գործ ձարեւ:

Ասըմ ա.— Արի ինծ հետ զնանք ձուկը բռնենք:

Էս աղքատը դրա հետ զնըմ ա ձուկն են բռնըմ, եդ րիգու բոլ ձուկ ա բերըմ տուն, բեխեքը լավ ուտըմ են:

Էքսի օրը ըլետ զնըմ ա ձկնորսի կուշտը, իրար հետ զնըմ են ձուկ բռնելու:

Ձկնորսն ասըմ ա.— Էրեգ տեսա ր ես վենց բռոր զցի:

Ասըմ ա.— Հա:

Ասըմ ա.— Դե առ էսօր էլ դու զցի, էսօր էլ քու հերթն ա, մի օր դու զցի, մի օր ես:

Էս աղքատը թոռը զցըմ ա թէ չէ, մի մեծ ձուկն ա բռնըմ:

Էս աղքատը էլետ ձկանը զցըմ ա ջուրը:

Էն ձկնորս տենըմ ա, ասըմ ա.— Էն խի՝ էն ձկանը բրախեցիր, ես քեզ բերել եմ ձուկ բռնես, թէ ձկների հետ խաղ անես, դե զնա կորի:

Էս մարդը ըտեղից զնըմ ա ուրիշ տեղ, վեր ըլեդ գործ գտնի, ճմփին մի ուշաք մի կով աղաքն արած գալիս ա. ու սրա աղաքին կաղնըմ: Էս մարդին ասըմ ա.— Էս վերդի՝ ես զնըմ:

Ասըմ ա.— Աղքատ մարդ եմ, հինգ-վեց քռոփա բեխա ունեմ, մի զատ չիկա ուտեն, զնըմ եմ մի գործ ձարեւ, աշխատեմ, բեխանցս մի հանգով պահեմ:

Ուշաքը ասըմ ա.— Էս կովը օրեկան մի վենձ կովկիթ լիքը կաթն ա տալի, առ տամ, կթի թող բեխեքը ուտեն մըչս մի տարի:

Տարին թմամի ես կզամ քեզ հարց կտամ, թէ պատասխանը տվիր, եդա կովը կթողեմ քեզ, թէ չէ՝ քեզ ուտիլ տեմ:

Էս մարդը ընգնըմ ա մտկի մեջ. «Տանեմ, թէ չտանեմ»: Մեկ էլ ասըմ ա. «Զահնդամը, հլա մի տարի բեխեքս լավ կապրեն մըչս տարին թմամիլը կամ կովը կսատկի, կամ կովատերը»:

Կովը բերըմ ա տուն, բեխեքը ուրախանըմ են, կովի ճակատը պաշըմ են, խոտ են քաղըմ, բերըմ դնըմ կովի աղաքին:

Մարդը կնգանը ասըմ ա.— Ախչի՝, արի կովը կթի:

Կնիկը մի պղինձ ա բերըմ, կթըմ, պղինձը լցվըմ ա, համա կաթը գետի պես գալիս ա, մարդը տանըմ ա դրդակըմ, բերըմ կթըմ են, էլի ա լցվըմ, սրանք մնըմ են զարմացած, իրեք հետ պղինձը լցնըմ են:

Էս կովը օրեկան իրեք պղինձ կաթն ա տալի: Սրա բեխեքը բոլ-բոլ կաթը, մածունը, կարազը ուտըմ են, մի դոլիցն էլ ծախում են:

Թե տարին վենց ա անց կենըմ, սիանք էլ չեն կլսի ըլըմ, թէ վենց տարին անց կացավ:

Տարին թմամում ա, էս մարդը կնգանը ասըմ ա.— Ա՛ կնիկ սրհե-սրհե բան ա ըլել, ըսօր Ուշաքը զալ տի:

Դրանք էդ օրը բոլորն էլ սզի մեջ են ըլում: Ըրիգունը մի դոնախ ա զալի դրանց տուն, ասըմ ա.— Մի տեղ կտա ք ինձ էս քշեր:

Ասըմ են.— Ախպեր ջան, սրհե-սրհե բան ա պտահել, ըսօր Ուշաքը զալ տի մեզ կուլ տա, դու իսի մեզ հետ անտեղի զնաս կորչես, զնա ուրիշ տեղ զտի, ընդի կաց:

Էս մարդք ասըմ ա.— Բան չի կա, ինձ դռան տակին մի տեղ տվեք, ես նրա հարցերին կպատասխանեմ:

Էս մարդին բերը են ներս, հաց բան են ուտըմ, քնելու վախտը ասըմ ա.— Իմ տեղը դռան տակին զցեցեք:

Ասըմ են.— Չէ՛, ախագեր ջան, դոնախ մարդ ես, խի ենք քու տեղը դռան տակին զցըմ:

Ասըմ ա.— Չէ՛, դռան տակին զցեցեք, վեր Ուշաբը հարց տա թե չէ, ես շուտ լսեմ, ձեռաց պատասխանեմ:

Սրա տեղը դռան տակին զցըմ են, ըստի կը քնըմ ա, զշերվա մի վախտը Ուշաբը գալիս ա դուռը թակըմ ա:

Ղոնախը ասըմ ա.— Էղ ո՞վ ես:

Ասըմ ա.— Ուշաբն եմ, եկել եմ:

Սա ասըմ ա.— Ես կը եմ եկել:

Ուշաբը ասըմ ա.— Դու ո բատեղից ես եկել:

Ղոնախը ասըմ ա.— Օխտը ծովի էն կողմիցն եմ եկել:

Ուշաբը ասըմ ա.— Հալբաթ ծովը պուճուր էր:

Ասըմ ա.— Ի՞նչ պուճուր, տնաքանդ, արծիվը մի ամսըմը անջախ մի ծերից մի ծերը կթռչի:

Ասըմ ա.— Բալքի եղ արծիվը պուճուր էր ըլել:

Ասըմ ա.— Ա՛ տնաքանդ, ի՞նչ պուճուր, ամեն մի թեևը մի քաղաք կծածկի:

Ասըմ ա.— Բալի քաղաքն ա պուճուր ըլել:

Ասըմ ա.— Զէ՛, տնաշեն, մի լավ, քու հավան կացած ձին մի ամսըմը անջախ եղ քաղաքի չորս կուռը պտիտ զա:

Ասըմ ա.— Բալի ձին քուռակ ա ըլել:

Ասըմ ա.— Չէ՛, ի՞նչ քուռակ, նրա կաշին, որ քերթեն, օխտ հարիր տղամարդի վերարկու կլեր:

Ասըմ ա.— Բալի եղ մարդիկ բեխեք են ըլել:

Ասըմ ա.— Չէ՛, ի՞նչ բեխեք, աքլորը վետերի տակին կանչըմ ա, իրանք իմանըմ չեն:

Ասըմ ա.— Բալի եղ մարդիկ քառ են ըլել:

Ասըմ ա.— Չէ՛, ի՞նչ քառ, պախրեն քոլըմը փողշտըմ ա նրանք ձենը մանըմ են:

Ուշաբը ել կարըմ չի բան ասի, տեսնմ ա կոտրը ընգավ, թողնըմ ա գնըմ, կովը մնըմ ա աղքատին:

Լիսանըմ ա թե չէ, սա ասըմ ա.— Դե մնացեք բարի, ես գնացի:

Ասըմ ա.— Ախագեր, դու ով ես, ասա, վեր մենք կը քու լավութենի փոխը եղ տանք:

Ասըմ ա.— Ես են ձուկն եմ, վեր բռնեցիր, ըլետ ջուրը զցեցիր: Դրա մհար կը ասել են լավութին արա զցի ծովը, թե ծովը մանա վեց, ձուկը հո կմանա: